2015-2016 ուստարի

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է 30 առաջադրանքից: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների հանրագումարից (առավելագույնը 35 միավոր):

Ստորև ներկայացնում ենք առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների համամասնությունը:

	Առաջադրանքների տեսակը	Առաջադրանքների քանակը	Առաջադրանքներին տրվող միավորները
1.	Ընտրովի պատասխանով	21	22
2.	Կարճ պատասխանով	9	13
3.	Ընդամենը	30	35

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

	Առաջադրանքների բովանդակային տիպերը	Առաջադրանքների համարները թեստում	Ընդամենը	Գնահատման միավորը
1.	Տարեթվերի, փաստերի և երևույթների իմացություն	1 - 8 21 - 27	15	15X1=15
		28 - 29	2	2X3 = 6
2.	Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն	9	1	1X1 =1
3.	Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների և հետևանքների իմացություն	10	1	1X1 =1
4.	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	11 -12	2	2X1 = 2
5.	Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն	13 -16	4	4X1 = 4
6.	Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների, անձնանունների համապատասխանեցում	17 - 20	4	4X1 = 4
7.	Պատմական փաստարկների, պնդումների համադրում, խմբավորում *(1 առաջադրանք - կազմված՝ 2 ճիշտ փաստից)*	30	1	1X2 = 2
8.	Ընդամենը		30	35

Ստորև ներկայացնում ենք 28-29-րդ առաջադրանքների գնահատման առանձնահատկությունները:

28-րդ և 29-րդ առաջադրանքները կարճ պատասխաններ պահանջող առաջադրանքներ են:Այս առաջադրանքների առանձնահատկությունն այն է, որ մեջբերված դասագրքային տեքստում բացակայում են 3 բառ (տարեթիվ, անձնանուն, տեղանուն, ստեղծագործության անվանում և այլն), որոնք աշակերտն ինքը պետք է լրացնի: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, «Մակմիլան-Արմենիա», Երևան, 2007 թ.:
2. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, «Մակմիլան-Արմենիա», Երևան, 2008 թ. :
3. «Հայոց պատմություն», Նոր շրջան, 8-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, «Մանմար», Երևան, 2013 թ.:
4. «Հայոց պատմություն», Նոր շրջան, 8-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ, «Զանգակ» Երևան, 2013 թ.:
5. «Հայոց պատմություն», Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, «Մանմար», Երևան, 2014թ.:
6. «Հայոց պատմություն», Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Ա.Մելքոնյան և ուրիշներ, «Զանգակ» Երևան, 2014թ.:

Առաջադրանքների ճիշտ պատասխանը որոշվում է բացառապես վերոհիշյալ դասագրքերում առկա նյութի հիման վրա: